դրսից, արմաւենիկի եռատերև է, միջինը սուր եւ կարմիր գնդակներով տերեւների հպման տեղերում։

Բայց աւելի ուշադրութեան արժանին արտաքին լուսանցքի (8 բ.) երկու մարդկային ֆիգուրներն են (սպասիր 1). մէկը ներքեւի, միւսը վերեւի գերանի վերայ կանգնած։ Դոցանից ներքեւինը, 11 սմ. մեծութեամբ, հագած է երկար պարեգօտ, մէջքում գօտեւորած, թէև չի երեւում այն հագուստի ծալքի տակ ծածկուած լինելով։ Հագուստի բուն գոյնը զորշ դեղին է, բայց զարդարուած երկու՝ կարմիր, վերան սեւագիծ զարդերով ծածկուած՝ ժապաւէնով, որ գօտկատեղից մինչև քղանցքի ծայրն է հասնում, իբրև հագուստի անմիջական մաս և ոչ ազատ, եղերուած սև գծերով։ Հագուստի ծալքերը յետևի կողմից ձևակերպուած են շնորհալի կերպով, սև ու զորշ գծիկներով։ Գօտկից բարձր նոյնպէս երեւում են կարմիր ժապաւէնաձև զարդերը, որ ուսի վերայից աջից ձախ կտրում է կուրծքը եւ ապա կողքից իջնում մինչեւ գօտին, որ հագուստի բացուածքի և կոճկուելու ուղղութիւնն է ցոյց տալիս։ Նոյն ժապաւէնաձեւ զարդը տեսնում ենք եւ թեւերի վերայ, որ իշխանական ծագման նշանն էր հին ժամանակում, յետագայում դառնալով ընդհանուր զարդ։ Ուսերի վերայից նոյնպէս երեւում է այդ կարմիր կտորը, բայց առանց գծազարդերի, եղերուած միայն սև գծով։ Կուրծքը և թեւերի վերին մասը բուն հագուստի կտորից է, բայց ասեղնեգործուած բուսական զարդերով։ Գլխին դրել է բարձր սեւ երկճիւղ գլխարկ. ճակատը, ինչպէս բաժանուած մասերը ներսից, զարդարուն. գլխարկի յետևի մասի (ճիւղի) գլխին մի ցցուն զարդով։ Գլխարկի, ինչպէս և հագուստի ընդհանուր ձևակերպութիւնը նման Զաքարէ եւ Իւանէ սպասալարների պատկերաքանդակին՝ Հաղբատայ վանքի արևելեան պատին (տ. մեր Խաղբակեանք կամ Պռոշեանք աշխատութեան շապիկը)։

Դէմքն առանց մազերի, բոլորակ, քիթը, աչքերն ու յոնքերը գեղեցիկ ձևակերպուած։ Ճակատի վերայ գլխարկի տակից երևում են գանգուրների երկու փունջ, իսկ կուրծքի վերայ իջնում են երկու սև ժապաւէններ, որոնցմով կապուած են յետևից, կարծում ենք, մազերը. այս երեւոյթը նկատելի է և լուսանցքի միւս ֆիգուրների նկատմամբ, որոնց մասին խօսք կ'լինի. մանաւանդ, որ մազերը շագանակագոյն են, իսկ երկու ժապաւէնները սև։ Թեւերը վերջանում են նեղ և կարմիր բազպանով, որ նոյնն է, ինչ որ միւս մասերում տեսանք։ Ձախ ձեռքում բռնած է զարդարուն և ծոպաւոր սրբիչ մը կամ թաշկինակ. այս մի և նոյնը նկատելի է նաև վերևի պատկերի մէջ, նաև կիլիկեան շքեղանի արքայական պատկերներում։ Աջ ձեռքով բռնած ուսին է դրել մի կեռագլուխ փայտ, կեռից մի ձուկ կախուած. փայտը կարմիր է, ուրեմն, ներկուած։ Վերեւը գրուած է փոքր երկաթագրով. «Շերենիկ քանի գաս ձուկն բեր»։

Կոշիկները երկու գլխաւոր գոյն ունին, կարմիրն ու դեղնաւունը. ճիտկի առաջին մասը կարմիր է, իսկ յետևինը դեղնաւուն, սև գծով ստուերած. ճիտկերի վերևի մասում կապերն էին, որոնց սեւ ծոպերը կախուած են ճիտկերի յետեւի կողմից։ Ոտքերի մասը դեղնաւուն է, իսկ կրունկը մինչև ոլոքները կարմիր, դարձեալ սև գծերով իրարից բաժանուած։ Կոշիկները կրունկ չունին, որի նմանը գործածական է մինչև այժմ էլ Վրաստանում։ Անդրվարտիկը, բնականաբար, չի երեւում, անցրած էր ճիտկենի մէջ։

Պարանոցի տակ երևում է սպիտակ շապիկը, պարանոցի և կուրծքի բացուածքները եղերուած սև գծերով։

Վերևի պատկերի, տաս սանտիմետր մեծութեամբ, հանդերձանքը փոքր ինչ տարբեր է նախընթացից. գլխարկն այստեղ պարսկական, բարձր արաղչինի ձև ունի. ներքինի մասում դէպի դուրս ծալուած, բայց ոչ բոլորաձև և հաւասար, այլ կողքերն աւելի բարձր, համեմատաբար. միջին մասը վեր է բարձրանում գմբեթաձև, բայց բոլորակ վերջաւորութեամբ, գագաթին թեթև զարդ կամ փունջ կրելով։ Վեր բարձրացող մասը երկու կտորից է կարուած, կանաչ վերան սև բծերով և զորշ կարմրաւուն, որոշուած միմեանցից մի սև երիզով. ներքևի ծալուած մասն էլ կանաչ է, սևով եղերուած։ Սրա մազերը սև են, դարձեալ յետևի կողմից սև ժապաւէնով կապուած, որի ծայրերն ուսերի վրայից իջնում են